

ՀԱՄԱՌՈՏ

ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԲԿԵՐԻ

ԵՒ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԱՆՈՐ ԲԱՐՔԵՐՈՒՆ,

ԲԱՐՔԱՌԻՆ ԵՒ ԱՌԱԾՆԵՐՈՒՆ (1)

Ա.

ԱՐԱԲԿԵՐ

1. - ԱՐԱԲԿԵՐԻ ԴԻՐՔԸ ԵՒ ԱՆՈՒՆԸ

Արաբկեր կը գտնուի Անդիտաւրոսի ստորոտը, Եփրատի արեւմտեան փոքր ճիւղի մը մօտ, Ասիական Տաճկաստանի $36^{\circ} \times 39^{\circ}$ աստիճանին տակ: Խարբերդի (Մամուրէթ-իւլ-Աղի) կուսակալութեան բաղմամարդ քաղաքներէն մէկն է. եպիսկոպոսական աթոռ Լուսաւորչական հայերու, 1759-էն ի վեր Կ. Պոլսոյ Պատրիարքարանի իրաւասութեան ներքեւ:

Վասպուրականի Սենեքերիմ հայ թագաւորը, անկարող սելճուքեան թուրքերուն դիմադրելու, իր փոքրիկ թագաւորութիւնը յանձնեց Բարսեղ Բ.ին (1021), անոր փոխարէն ստանալով Սեբաստիոյ իշխանապետութիւնը՝ շրջակայ ընդարձակ լեռնային դաշտադէտներով. իր դերեղմանաբարը դեռ գոյութիւն ունէր Ս. Նը-

շան վանքի աւանդատան դրան առջեւ, զոր ես անձամբ տեսայ 1907-ին ուղեւորութեանս ժամանակ: Հայ ժողովուրդը հոս գաղթած է Սենեքերիմի հետ՝ 100.000 հոգիէ աւելի բաղմութեամբ, որոնք յետոյ քանի մը քաղաքներ շինած են, որոնց վրէխաւորն է Արաբկեր (Անդի-Քաղաք):

Արաբկերի անունին ստուգարանութեան համար կը պակսին որոշ եւ հաւաստի աղբիւրներ, զրաւոր յիշատակարաններ: Այդպիսին եւ եկեղեցական արձանագրութիւններն ալ ջնջուած ըլլալով 1895-ի մեծ ջարդին, մութի մէջ կը մնանք: Մեր օրերը ապրող ծերունիներէն պատմած աւանդութեան համաձայն, Պարսկահայ մեծ գաղութ մը կու գայ կը հաստատուի Անդի-Քաղաք կոչուած տեղը, որ այժմու Արաբկերէն քառորդ ժամ հեռի է դէպի հարաւ-արեւմուտք, եւ որուն իբրեւ արուարձան՝ օգափոխութեան կը ծառայէր ամրան ջերմ հինգ ամիսներուն: Յետոյ ժամանակաւ, աւելի չոր եւ առողջարար

գործերուն մասին տե՛ս Բագմ. 1952, թ. 3-4, էջ 95-96:

Իսկ Արաբկերի մասին տե՛ս գլխաւորաբար

- 1) Հ. Ս. Էփրեկեանի «Բնաշխարհիկ բառարան»-ին մէջ (տպ. Վենետիկ, 1903-1905), էջ 279 - 281.
- 2) Մելիք Ս. Դաւիթ-Բէկի «Արաբկերի գաւառաբարբառը», տպ. Վիեննա, 1919:
- 3) Ս. Ա. Բախտիկեանի «Արաբկեր եւ շրջակայի գիւղերը», տպ. Պէյրութ, 1934:

(1) Ընդառաջ գալով Արաբկերցի հայրենակիցներու խնդրանքին՝ հաճոյքով կը հրատարակենք մեր հանդուցեալ Հ. Ալեքսիս վրդ. Յովսէփեանի այս ձեռագիր աշխատութիւնը, որ լի է ազգագրական ու տեղագրական բաղմութիւ տուեալներով, քաղելով դայն իր յուշերու տեսարաններէն: Նիւթի յստակութեան համար՝ մեր կողմէ դըրած ենք գլուխներու բաժանումներ եւ փոքրիկ գլխակարգութիւններ:

Հ. Ալեքսիս վրդ. Յովսէփեանի կեանքին ու

ու ջրարբի, ինչպէս նաեւ բլուրներով, ձորերով ու պտղատու ծառերով ախորժելի վայրի մը հետամուտ, ժողովուրդը հետգհետէ կը լքէ դայն, որուն արդէն պարիսպները եւ տուներու մեծ մասը քանդուած էին բարբարոս ձեռքերէ, եւ կու գայ հաստատուիլ այս տեղւոյն վրայ, զոր Նոր-Արաբկեր կը յորջորջէ: Բնակիչներուն Անդի-Քաղաքէն Արաբկեր փոխադրուելը հաւանօրէն 100-150 տարի առաջ եղած ըլլայ:

Մեր օրերուն տակաւին ժողովուրդը պոռոյտի կամ ուխտի կ'երթար դէպի Անդի-Քաղաք, միասին տանելով օրուան ուտելիքը, որովհետեւ հոն կարելի էր բան մը գտնել. հաղիւ քանի մը թուրք ընտանիքներ կային՝ խեղճ վիճակի մէջ:

Արաբկեր՝ տեղացիները կը ստուգարանեն ա'րք եւ կ'եր, անշուշտ որովհետեւ հոնց ի վեր այլ մարդիկ չընկալ քաղաքները կ'երթային, կամ աւելի հեռաւոր աշխարհներ, ինչպէս Եփրատ, Կ. Պոլիս, Ամերիկա եւն., կը շահէին եւ Արաբկեր կը վերադառնային՝ ժամանակ մը վայելելու, մինչեւ որ շահածնին սպանէր. յետոյ կրկին կը մեկնէին եւ այսպէս միշտ:

Ոմանք ալ Արաբկերս-ի աղաւաղում կը նկատեն. սակայն գոյութիւն չունի որ եւ է արաբկերութեան հետք: Իր կառուցուածքով կը նմանի Բաղէշի, շինուած ըլլալով երեք ձորերու մէջ, բլրաձեւ դաւանդներու կողերուն վրայ:

Հին տան, իբր թէ՛ Երապոլիս կամ Հիերապոլիս կը կոչուէր, եւ իր ամուր ու անմատոյց պարիսպով համբաւաւոր էր, ըստ Բիւզանդական պատմութեան. օր մը թշնամին կը շրջապատէ, քաղաքացիները քաջարար կը դիմադրեն, բայց ի վերջոյ

(2) Այս գաղթականութիւնը հաստատած է Պոմպէոս եւ կոչած է Colonia. այժմ Աղուանձոր կը կոչուի:

կ'ընկճուին. թշնամին պարիսպին մէկ ձեղքուածքէն ներս կը խուժէ. խրամատէն առաջին անցնողը արար մը կ'ըլլայ հրամանով իր առաջնորդին՝ որ կ'ըսէ. «Արա'ք, կի'ր» (այսինքն՝ Արա'ք, մտի'ր), ուսկից Արաբկիք անունը կը մնայ՝ իբրեւ արաբաւուտ: Այս առասպելական աւանդութիւնը որչափ ստուգութիւն ունի՝ չեմ դիտեր. սակայն այսքանը ստոյգ է, որ Անդի-Քաղաքի այսօրուան աւերակները մեզի ենթադրել կու տան՝ թէ՛ այդտեղ պարսպապատ, հարուստ եւ գեղեցիկ շէնքերով զարդարուած ձոխ քաղաք մը կ'ապրէր ատենօք: Այսպէս, քիչ թէ՛ շատ առասպել, աւանդութիւն եւ պատմութիւն կը գոլգոլեն:

Արաբկեր, աւելի պատմականօրէն, կը գտնուէր Կողոնիա դաւառին մէջ, ուր հայ մեծ գաղթականութիւն մը հաստատուած էր(2), ինչպէս կ'աւանդէ Կոստանդին Պերփիւրի(3), որ այս դաւառին մասին խօսելու միջոց՝ կ'ըսէ. «Կը սկսի Նէոկեսարիա քաղաքէն, որ հայրենիքն է եղած Ս. Գրիգոր Սքանչելագործի, եւ Յաւաղրոն լեռնէն, ու կը տարածուի մինչեւ Արաբրակէս քաղաքը, որ հայրենիքն եղաւ ամենահռչակաւոր եւ ամենամեծ մարտիրոսին՝ Եւստոտիոսի, ու կը հասնի մինչեւ Նիկոպոլիս եւ Տիւրիկ կոչուած աւանը, որուն տիրեց Խրիստոփոր, Մանիքեոյ հռչակաւոր իշխանը, եւ Քարբէաս՝ որ ամպարչտագոյնն էր...»(4):

Արաբրակէսի թէ՛ անունը եւ թէ՛ տեղագրութիւնը շատ կը յարմարի Արաբկերի: [Խարբերդ անունն ալ կը թուի առաջ եկած ըլլալ Խարբէաս իշխանի հոն ամրանալէն, եւ ի սկզբան Խարբէասի - բերդ կոչուած ըլլալ. թէ՛ եւ ցարդ տիրապետած է Քար-Բերդ ստուգարանութիւնը]:

(3) Հմմտ. «Բանակաբեմեր», Ա. հատ. էջ 31:

(4) Անդ:

քրիստոնեաներու ձեռքն էր, մեր ներշնչած վստահութեան համար: Կրնանք ըսել թէ բան չէ պակսած, ու խաղաղութեան մէջ Արաբկերցին դիզած է գանձ, գիտութիւն եւ կեանքի փորձառութիւն: Յատկապէս հայ Կաթող. առաջնորդ վարդապետները մեծ պատիւ, համբաւ եւ վստահութիւն կը վայելէին թուրք կառավարութեան քով եւ ամբողջ հայութեան սրտին մէջ՝

(Շարունակելի)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԵՐԴԵՐԸ

Մարդս իր գոյութեան առաջին օրէն հարկը դրացած է ինքնապաշտպանութեան, քանի որ զանազան տեսակէտներով խոցելի էր զինքը շրջապատող տարրերէն եւ կենդանիներէն, որոնք յարատեւօրէն կը սպառնային իր կեանքին: Նախապատմական շրջանին մարդս չունէր ինքնապաշտպանութեան ազդու միջոցներ. չկային ոչ մեքենական զէնքեր, ոչ անտիկ պատսպարաններ եւ ոչ ալ հիւանդութիւններու հակազդող դեղեր: Վտանգի պարագային՝ կ'ապաւինէին լեռներու բարձունքներուն վրայ կամ ժայռերու մէջ գտնուած քարայրները. տակաւ սկսած էին շինել խոռոչներ անտառներու մէջ, կամ հիւղակներ՝ լիճերու վրայ:

Շատ հին ժամանակներու մէջ ինքնապաշտպանութիւնը անհատական էր, եւ գլխաւորապէս հիմնուած ֆիզիքական ոյժին վրայ. երբ մարդկային կեանքի յեղաշրջումով այս միջոցները անգործ դարձան, ապա մարդիկ դիմեցին հաւաքական պաշտպանութեան հնարքներու. մարդիկ որ ցրուած էին լեռներու եւ անտառներու մէջ՝ իրարու քով հաւաքուեցան, կազմեցին ցեղախումբեր, ստեղծուեցան գիւղեր

իրենց գիտութեամբ, խոհմութեամբ, հայրենասիրութեամբ ու քաղաքագիտութեամբ. արդարեւ ասոնց գիմումներով թուրք կառավարութիւնը շատ մը հարցերու աչք կը դոցէր, բանտերէն յանցաւոր կարծուածները կ'ազատէր եւ որ ըստ կարգի, մինչեւ հասաւ աղէտի թուականքը, որ մեր պատմութեան աւելջը դեռ:

Հ. ԱԼԵՔՍԻՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ

եւ քաղաքներ եւ բարձրացան հասարակաց պաշտպանութեան բերդեր ու պարսպապատ քաղաքներ, գծուեցան նաեւ ազդերու մէջ հողային սահմաններ: Սահմանափակելով մեր ուսումնասիրութիւնը՝ մեր ազգային ինքնապաշտպանութեան եւ մեր երկրին մէջ, կրնանք ըսել թէ Հայաստան՝ ամէնէն առաջին երկիրներէն մէկը եղաւ՝ ուր բարձրացան մարդկային առաջին ինքնապաշտպանութեան բերդերը. մեր երկրին բնական դիրքը, բարձրաբերձ լեռները, խոր անդունդները անմերձեանի բերդաքաղաքի մը երեւոյթը ունին, ուր քաղուեցան մեր նախահայրերը, պաշտպանութեան մեր իրենց գոյութիւնը, եւ պանելու համար իրենց գոյութիւնը, եւ հոն այդ հսկայ լեռներուն վրայ էր որ բարձրացուցին Հայաստանի առաջին բերդերը:

Որո՞նք կանգնած են մեր ինքնապաշտպանութեան առաջին բերդերը, որո՞նք եղած են մեր առաջին բերդերը. պիտի ջաղած պատասխանել այս հարցումներուն մեր այս համառօտ ուսումնասիրութեան մէջ, աւելցնելով համառօտ ակնարկ մը մեր հայ բերդերու կատարած դերին եւ անոնց արուեստի մասին:

Հայաստանի հնագոյն բերդերը

Հայաստանի հողը հնախօսական տեսակէտով տակաւին բոլորովին ուսումնասիրուած չէ, եւ ամբողջովին պեղումներ կատարուած չեն, եւ մեր պատմութեան պատմական շրջանի առեղծուածը տակաւին լուծուած չէ. մինչեւ այսօր եղած քննութիւնները եւ հնախօսական պեղումները ցոյց կու տան՝ թէ պատմական շրջանին մեր հողին վրայ ապրել են ուրիշ ժողովուրդներ, քաջարի եւ կորովի ազգեր, որոնք անմահացուցած են իրենց յիշատակը բազմաթիւ բեւեռադիր արձանադրութիւններով, ուր կայ արձագանգը Ասորեստանի դէմ մղած երկարատեւ պատերազմներուն. այդ ժողովուրդը կը կոչուէր Նայիր – ուրարտացի:

Երբ Քրիստոսէ առաջ 1410-ին ասորեստանցի թագաւորները ոտք կոխեցին Նայիրեան հողին վրայ, իրենց դէմ դրան զօրաւոր եւ կազմակերպուած բանակ մը, որ դիւրաւ տեղիք չտուաւ ասորեստանեան ոյժերուն: Անոնք երկար դարեր կուր մը զեցին այդ հզօր բանակներուն դէմ, եւ շատ անգամ դուրս վտարեցին զանոնք, մինչեւ որ քայքայուած եւ տկարացած երկար կռիւներէ՝ նուաճուեցան ասորեստանեան հզօր բանակներէն:

Այս շրջանի (ն. Ք. 2000–1410 եւ 1410–860) բեւեռադիր արձանադրութիւնները ցոյց կու տան՝ թէ մեր երկրին մէջ կային ինքնապաշտպանութեան բազմաթիւ բերդեր եւ ամրոցներ. այսպէս, Ասուր–Նազիր – Արալ (885–860) երբ տիրեց Նայիրի եւ նախ Նուամի–ի, որ Արաւմանիի աջ ափին վրայ կը տարածուէր, կ'ըսէ իր բեւեռադիր արձանադրութիւններուն մէջ. «Մարդիկ քաղուեցան... դժուարամտօյց լեռներէ քաղուեցան... արծուի բոյնի նման... եւ հոն կառուցին արծուի բոյնի նման ամրոց մը. հոն՝ ուր իմ նախահայրերս չէին կրցած բարձրանալ, երեք օրուան մէջ բարձրացայ... եւ կործանեցի

իրենց բոյնը...: Ասիկա ցոյց կու տայ թէ այդ ամրոցը իրմէ շատ տարիներ առաջ գոյութիւն ունեցեր է, ուր չեն կրցած բարձրանալ իր նախահայրերը եւ կ'ենթադրուի որ դոնէ 1500–1000-ի ատենները այդ ամրոցը գոյութիւն ունենար:

Ի՞նչ կը կոչուէր այդ ամրոցը. արձանադրութիւնը չի' որոշեր, սակայն կու տայ ուրիշ ամրոցներու անուններ նոյն շրջաններուն մէջ. նոյն աշխարհակալը կ'ըսէ. «Յարձակեցայ Պետուրա ամրոցին վրայ, որուն բնակիչները գերի ինկան...: Թէ ո՛ւր կը գտնուէր այս ամրոցը՝ նոյնպէս անորոշ է. հաւանաբար Արաւմանիի ափերուն վրայ, ուր մղուեցան ասորեստանեան առաջին կռիւները:

Ասուր–Նազիր–Արալ, կը յիշէ նաեւ Դամիգամուգա բերդը, որուն կը տիրէ առանց երկար դիմագործեան:

Այս երեք հնագոյն բերդերուն մասին մանրամասնութիւններ կը պակսին, սակայն կան ուրիշ բերդեր եւս որոնք տակաւին պեղումներու կը կարօտին: Վերջերս Հայաստանի հնախօսական հաստատութիւնը իր պեղումները կատարելով Կարմիր բլուրի շրջանին մէջ, դուրս հանած է հնադարեան քաղաք մը իր Թեւ–րիաւի բերդով, եւ ըստ հնախօսներու, այս բերդը գոյութիւն է ունեցեր է. դարուն (ն. Ք.), ուր գտնուած են նաեւ պղնձէ սաղաւարտներ, զրահներ եւ զէնքեր՝ Մե–նուաս Ա.ի մակագրութեամբ, որ ապրած եւ թագաւորած է 800–780 (ն. Ք.):

Բերդ մը որուն մասին մանրամասնութիւններ ունինք եւ որուն մասին շատ անգամներ կը խօսին բեւեռադրութիւնները եւ հայ թէ օտար պատմիչները՝ Վան կամ Վան Տոսպ բերդն է: Ատոր մասին առանձին պիտի խօսինք: Հոս առ այժմ ըսենք՝ թէ Վանի բերդը Նայիր Ուրարտեան շրջանին ամէնէն մեծ կառուցուածքներէն է համանուն լճի ափին բարձրացող քարա–ժայռերուն վրայ: Իր հնութեան վկաններն